ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արշալույս Հարությունյան, ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչության արտաքին հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Ալմաթի, Ղազախստան, 2024 թվականի փետրվար 26-ից 28-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝

Արժույթի միջազգային հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն:

***4.* Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակն էր մասնակցել Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ձևավորած Մակրո-ֆիսկալ հարցերով ռեգիոնալ ցանցի անդրանիկ աշխատաժողովին:

5. Քննարկված թեմաները՝

Մակրո-ֆիսկալ հարցերով ռեգիոնալ ցանցի անդրանիկ աշխատաժողովին մասնակցել են Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրների և Մոնղոլիայի ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների ղեկավար կազմի, ինչպես նաև ԱՄՀ ղեկավար կազմի ներկայացուցիչները և մասնագետները, ովքեր քննարկումներ են իրականացրել, այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են.

•Հարկաբյուջետային զարգացումները և մարտահրավերները տարածաշրջանի երկրներում,

•Մակրո-ֆիսկալ վերլուծությունների ու կանխատեսումների կազմակերպման փորձը ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություններում և ԱՄՀ մոտեցումները,

•Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման և կառավարման փորձը մասնակից երկրներում և այս ուղղությամբ ԱՄՀ կողմից առաջարկվող տեխնիկական աջակցության հնարավորությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվել է մակրո-ֆիսկալ ուղղությամբ ՀՀ ձեռքբերումները և հարուստ փորձը՝ անդրադառնալով մի շարք առանցքային հարցերի, ինչպիսիք են՝ ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության ուղղությամբ իրականացվող հիմնական աշխատանքները, մակրոտնտեսական կանխատեսումների և քաղաքականության վերլուծության համակարգը և զարգացման հեռանկարները, սցենարային կանխատեսումները և մակրո-ֆիսկալ ռիսկերի գնահատման գործիքներն ու մոտեցումները, պարտքի կայունության գնահատման և հարկաբյուջետային կանոնների Հայաստանի փորձը:

Աշխատաժողովի ընթացում մասնակից երկրների ներկայացուցիչները նույնպես ներկայացրել են իրենց երկրների մակրոտնտեսական և հարկաբյուջետային զարգացումները և այս ուղղությամբ առկա փորձը, մտքեր են փոխանակվել մակրոտնտեսական և հարակբյուջետային արդի մարտահրավերների շուրջ:

Միաժամանակ, աշխատաժողովի ընթացքում երկկողմ հանդիպումներ են տեղի ունեցել ԱՄՀ տարբեր ներկայացուցիչների հետ: Մասնավորապես՝ հանդիպումներ են տեղի ունեցել ԱՄՀ հարակբյուջետային հարցերով դեպարտամենտի ներկայացուցիչների, Հայաստանի երկրի թիմի առաքելության ղեկավար Իվա Պետրովայի, ԱՄՀ Հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Ումանգ Ռավաթի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոնի ղեկավար Նորբերտ Ֆանկեի և մակրոտնտեսական հարցերի գծով խորհրդական Մարտին Ֆուկաչի հետ: Հանդիպումների ընթացում քննարկվել են ՀՀ համար տեխնիկական աջակցության առաջնահերթությունները և հնարավորությունենը՝ պետական ֆինանսների կառավարման, հարկային քաղաքականության, հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համապարփակ համակարգի ներդրման, կառավարության ֆինանսների վիճակագրության և մակրոտնտեսական մոդելավորման ուղղություններով, ինչպես նաև քննարկվել է ՀՀ ՖՆ աշխատակիցների կարողությունների զարգացման ուղղությամբ հնարավոր աջակցությունը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Աշխատաժողովի շրջանակներում որոշումներ չեն ընդունվել, և փաստաթղթեր չեն ստորագրվել: ԱՄՀ ղեկավար կազմի և մասնակից երկրների ներկայացուցիչների համաձայնությամբ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել մակրո-ֆիսկալ հարցերով ձևավորված ռեգիոնալ ցանցի աշխատանքները՝ յուրաքանչյուր տարի կազմակերպելով մակրո-ֆիսկալ առանձին հարցերի վերաբերյալ թեմատիկ հանդիպում, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել ընդլայնել մասնակիցների շրջանակը՝ ներգրավելով այս ոլորտում հարուստ փորձ և ճանաչում ունեցող մասնագետների:

ԱՄՀ գործընկերների հետ պայմանավորվածություն է ձեռքբերվել տեխնիկական աջակցության կարիքների ուղղությամբ կազմակերպել հետագա քննարկումներ և դրանց հիման վրա ձևավորել դրանց տրամադրման հստակ ժամանակացույց:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

9. ***Ստորագրությունը, ամսաթիվը՝***

04.03.2024թ.